

# Մայիս 28, Եռագոյն, Հայաստանի Հանրապետութիւն Եւ Արցախ, Այսօրուան տուեալներով

## Երուանդ Ազատեանի շահեկան գրոյցը Փարիզի Մէջ

Վերջերս Փարիզի Ռատիօ «ԱՅՔ»-ը ընդարձակ եւ համարձակ հարցազրոյց մը ունեցած է Երուանդ Ազատեանի հետ, որ կարճ այցելութեամբ մը կը գտնուէր Փարիզ: Մեր թերթի բարեկամներէն Բ.Ա. ձայնդիզէն արտագրելով սոյն գրոյցը դրկած է մեզի: Կը հրատարակենք կարգ մը յապատումներով ու խմբագրումներով:

**ՌԱՏԻՕ «ԱՅՔ»Ի ՎԱՐԻՉ ԅԱԿՈՐ ՊԱԼԵԱՆ.-** 1988 Փետրուարին Հայոց Պատմութիւնը մտաւ նոր հունի մէջ եւ գրեթէ անպասելի կերպով, թերեւս կարգ մը անձերու համար նախատեսութիւններ կային... Բայց մեր ժողովուրդը իրօք անակնկալի եկաւ երբ պայթեցաւ Ղարապաղեան պահանջատիրութիւնը եւ անոր յաջորդեցին Երեւանի աննախընթաց համաժողովրդային եւ համագային ցոյցերը: Դուք որպէս մտաւորական, գրող անհատ, որպէս միտք եւ Ռ.Ա.Կ.ի անդամ, հետեւաբար քաղաքական մտածողութիւն ունեցող անձնաւորութիւն ինչպէ՞ս դիմաւորեցիք այս անկիւնադարձը:

**ԵՐՈՒԱՆԻ ԱԶԱՏԵԱՆ.-** Երբ այդ քաղաքական իրադարձութիւնը հրապարակ ելաւ, մտածեցի թէ Հայ ժողովուրդը իր պատմութեան ընթացքին միշտ նախասիրած է նոր գաղափարի մը առաջին նահատակը կամ նախակարգային ըլլալ: Ինչպէս Հայ ժողովուրդը նախընտրեց ամբողջ Հեթանոս աշխարհին մէջ առաջին քրիստոնէսացի ազգը դառնալ, նոյնպէս ալ ցեղերու եւ գաղափարներու խառնուրդին, կայսրութեանց ու բոլոր պետութեանց այդ խառնիճադանին մէջ առաջին ողջունողը եղաւ նոր ընկերակարական յեղափոխութիւնը Կովկասի մէջ:

Այսօր ալ Խորհրդային Միութեան Կլասնոսթի եւ Փերեսթրոյթայի յայտարարութեան առաջին փորձարկութիւնը կատարուեցաւ Հայ ժողովուրդի կողմէ, Հայ ժողովուրդի գլխուն վրայ գուցէ... Հայ ժողովուրդին իսկ ընտրութեամբ:

Հայերս միշտ առաջինները եղած են իբրեւ պատմութեան սահմանները փորձողները, մինչեւ որ մեր գլուխը պատին գարնուի:

Ես այդ սպաւորութիւնը ունեցայ եւ կարծիքներու ամբողջ շարք մը արտայայտուեցաւ, թէ՛ մենք քիչ մըն ալ պէտք էր սպասէինք, իսկ ուրիշներ ըսին թէ մենք արդէն շատ սպասեցինք եւսյն:

Բաւական տեղեակ ըլլալով թէ Արցախի շարժումը 1920-1923էն վերջ ինչպիսի փուլերէ անցած է, չեմ կարծեր որ Հայ ժողովուրդը յանկարծածեր ուր Հայ ժողովուրդը յանկարծական պոռթկում մը ունեցաւ: Բազմական պոռթկում Արցախի ժողովուրդը միջոցներու դիմեց իր արդար դատը լուծելու, ինչպէս Սերո Սանգատեանի միջոցաւ եղած կողմը եւ բազմազար ստորագրութիւններու առաջումը Մոսկուա, այդ փորձերը եղան թէ՛ Խորհրդային Թամանակ, եւ թէ՛ ալ Պրեժնեկի միշտ եւ բոլոր ժամանակներուն, նոյնիսկ քաղաքական բոլորողներին անկարելի պայմաններուն տակ անգամ, մեր ժողովուրդը իր պահանջատիրութիւնը ներկայացուց անսահման կերպով:

Յանկարծ երբ քաղաքական աւելի թոյլատու պայմաններ ներկայացան՝ ուրեմն այդ պահանջատիրութիւնը հրապարակ ելաւ եւ անոր արտայայտութիւնը եղաւ քիչ մը բուռն թերեւս, բայց երեւոյթը հասունացում մըն էր երկար processի մը քան թէ՛

քաղաքական արկածի մը:

**ՌԱՏԻՕ «ԱՅՔ».-** ՌԱԿը քանի մը ամիսներ առաջ, այս բոլոր հոլովոյթներուն ընթացքին, պետական որոշումէն առաջ, Բիչ մը անակնկալի բերաւ, երբ հաղորդագրութիւն մը հրապարակեց Մայիս 28ի եւ եռագոյն դրօշի մասին: Դուք որ միշտ դեմ էիք այդ խորհրդանիշներուն ինչպէ՞ս կը բացատրէք այդ կեցումները որուն համար ուրախացողներ, անակնկալի եկողներ եւ համաձայն չեղող՝ դժգոհներ ալ գտնուեցան:

**Ե.Ա.-** Գիտէք որ Միւսրան Ծամատեան որ Կիլիկիոյ ազգային օճախի շարժումին ձեռնարկեց 1920ին եւ անկախութիւն հռչակեց, որ մէկ օր պիտի տեւէր, եռագոյն դրօշը ընտրած էր: Ան որպէս Հայաստանի Հանրապետութեան դրօշակ յարգելի տեղ մը ունէր. նոյնպէս՝ Մայիս 28ը որ մեր դարաւոր գերութեան վերջ Հայկական պետականութեան վերականգնումի օրն է (հոգ չէ թէ ինչ պայմաններու մէջ): Ատիկա ոչ ոք կրնայ ուրանալ որպէս պատմական իրողութիւն: Թամակա վարներու ու սփիւռքի համար դժուարութիւնը այն էր որ երբ Հայաստանի Հանրապետութիւնը կերպով մը իր վախճանին հասաւ 1920ին եւ Խորհրդային կարգերը հաստատուեցան հոն, Եռագոյնը սփիւռքի մէջ հետզհետէ դարձաւ իբրեւ հակադրութեան խորհրդանիշ մը Հայաստանի իրականութեան. հիմա անոր պատասխանատուները փնտռելու ժամանակը չէ. բայց ուրեմն դրօշը այդպէս ներկայացուեցաւ. Թամակա վարները իբրեւ Խորհրդային Հայաստանը պաշտպանողներ, այդ քարուքանդ, ընկճուած ու սոված երկրին յարութիւնը ցանկացող եւ օգտակար հանդիսանալ ուզողներ՝ չէին բաժնէր Եռագոյնի այդ բնոյթը որ կը հակադրուէր Հայաստանի իրականութեան: Երկու մասի բաժնուցաւ արտասահմանի Հայ ժողովուրդը: Եռագոյնի պարտադրութեան ճամբուն վրայ գոհեր ալ տրուեցան: Ուրեմն, եռագոյնը իբրեւ Հայաստանի իրականութեան հակադրութիւն կամ իբրեւ այդպիսի խորհրդանիշ նշելն է որ չընդունուեցաւ սփիւռքի ոչ-դաշնակցական հատուածին կողմէ: Հիմա Թամակա վարներու այս «ընդադրո՞ւմ» կամ Եռագոյնի դժանդէպ յարգանքի վերադարձը արդիւնքն է Հայաստանի մը, եռագոյնը դադարեցաւ հակադրութիւն մը ըլլալէ՛. անոնք որոնք հարկադրուած էին մինչեւ հիմա Հայաստանի ներկայ քաղաքականութեան, Թամակա վարներու բռնած դիրքին մօտեցան, ճաննալով ներկայ Հայաստանը իբրեւ միակ երկիրը - աղէկ կամ գէշ -, ան մեր Հայաստանն է եւ այդ իրականութիւնն է որ մենք պիտի առնենք եւ մեր պատմութիւնը պիտի կերտենք այդ հիմքով:

Ուրեմն հասարակաց վերաբերում մը ստեղծուեցաւ Հայաստանի ներկայ իրականութեան նկատմամբ եւ տարբերութիւնները, պիտի ըսեմ, մոգական պահի մը մէջ նուազեցան: Հիմա թէ՛ Դաշնակցութիւնը Խորհրդային Հայաստանը կը ճաննայ, կ'օգնէ

անոր, երբեմն մեզմէ ալ աւելի, ես կը կարծեմ այլեւս թէ պայքարի ամէն պատճառ գոյութեան իրաւունք է կը դադրի: Պէտք չէ որ որեւէ Հայ բնազդական կերպով հակառակութիւն ունենայ ուրիշ Հայու մը հանդէպ: Մէկու մը հանդէպ հակառակութիւն կ'ունենաս եթէ գաղափարական տարբերութիւն կը զգաս, հիմա գաղափարական հիմնական տարակարծութիւնները վերցուած են եւ վէճերը գոյութիւն ունենալէ դադարած են, որովհետեւ գաղափարի նոյնութիւն կայ, վերաբերումի նոյնութիւն մը՝ կայ Հայաստանի հանդէպ:

Ամէնուս նպատակը երկրաշարժէն տուժած Հայաստանը վերականգնելն է: Նոյնպէս Արցախի հարցով ամբողջ արտասահմանը միասնական կերպով ոտքի կանգնած է եւ լծուած քաղաքական լուրջ գործի:

Ասոր համար է որ ՌԱԿը դիմեց Հայաստանի իշխանութեան: Այս դէպքերու ընթացքին տեսնելով որ Պալթեան երկիրներու մէջ վերականգնեցան նախկին դրօշակները եւ նախկին տօները, ժամանակը հասած նաեւ նկատեց իր պատմական տեսակէտը աւելցնելու դրօշակի հարցին մէջ:

Այդ նախատեսութեամբ, պատմական գործընթացին մէջ ՌԱԿը իր փափաքը միացուց եւ միակամութիւնը յայտնեց Հայաստանի ժողովուրդին հետ:

ՌԱԿի հաղորդագրութիւնը կարճ բայց բաւական իրարանցում պիտի ստեղծէր: Մարդիկ վարժուած են որոշ սեմպոլներով եւ կաղապարներով տեսնելու դէպքերը եւ իրականութիւնները:

Սակայն, այսօր մեր քաղաքական ամբողջ թոնթէքսը փոխուած է՝ ըլլայ Հայաստանի, ըլլայ արտասահմանի թէ Խորհրդային Միութեան մէջ. ամբողջ աշխարհի յարուածութիւնը հետզհետէ մեղմանալու վրայ է, հետեւաբար մեզի կը մնայ իբրեւ կոտորակուած ժողովուրդ, իբր «փոշի ազգ», ինչպէս կ'ըսէր Վահան Թէքէեան, այդ փոշին ի մի բերել որ ան միանալով «քար դառնայ»:

**ՌԱՏԻՕ «ԱՅՔ».-** Արցախի հարցը ինչպէ՞ս կը տեսնէք, ինչի՞ կրնայ յանգիլ...:

**Ե.Ա.-** Այսօր Արցախը չի կրնար

Ատրպէյճանի կազմին մէջ մնալ: Եթէ կեղրոնական իշխանութիւնը անտարբեր մնայ կամ եթէ Արցախի ժողովուրդը տեղի տայ՝ այն վտանգը որ կը սպառնայ կամ կը սպառնար 70 տարիներէ ի վեր, Ազերիները գայն աւելի սուր կերպով պիտի գործադրեն. այդպէս որ Արցախը հիմա հոգեկան ու քաղաքական զօրաշարժի մը մէջ է. չի կրնար ետ դառնալ հին դրութեան, նորէն մաս կազմելով Ատրպէյճանին: Արդէն այդ հանգրուանը անցած ենք, գոնէ թուղթի վրայ. Արցախը Ատրպէյճանի իշխանութեանն է դուրս հանուած եւ դրուած է Մոսկուայի Խորհրդային կեղրոնական իշխանութեան հսկողութեան տակ: Մենք իրատես պէտք է ըլլանք կարենալ տեսնելու եւ հաստատելու Խորհրդային ընդհանուր քաղաքականութիւն մը՝ թրքախօս ազգութիւններու համար:

Մենք հոն փոքր քրիստոնէայ ազգ մըն ենք. որքան ալ Խորհրդային իշխանութիւնը կրօնը չի ճաննար, կրօնը եւ ազգութիւնը չըջնի ժողովուրդներուն համար նոյնացած են: Մեր կրօնը մեր ազգին հետ նոյնացած է, ինչպէս Ազերիներունը: Խորհրդային կեղրոնական իշխանութիւնները հաշուի պիտի առնեն այդ իրողութիւնը: Հաւասարակշռութեան հարց մը կայ հոն. դժբախտաբար հաւասարակշռութիւնը մեզի ի նպաստ չէ: Չեմ կարծեր որ Մոսկուայի իշխանութիւնը այսօր քաջութիւնը ունենայ ամբողջութեամբ գոհացում տալու մեր փափաքներուն:

Բայց ինչ որ ալ ըլլայ՝ Արցախը չի կրնար մնալ Ատրպէյճանի կազմին մէջ. մեզ կը մորթեն ինչպէս որ մորթեցին Սոււկայիթի մէջ կամ ինչպէս այսօր Շուշիի եւ Շահումեանի շրջանին մէջ կը տեսնենք: Նոյնիսկ արուեստական կերպով ստեղծուած այն անցքը որ գոյութիւն ունի Արցախի եւ Հայաստանի միջեւ՝ չեն ձգեր որ մենք հոն չունչ առնենք. ատիկա մեր պորտալարն է Հայաստանի հետ ուրիշ մեր աւելը պիտի գայ: Այդ պորտալարը անգամ կտրել կ'ուզեն զրգուելով շրջանի քեւրտերը Հայոց դէմ:

(Շարք տեսնել 10րդ էջ)

**ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿԵԱՆ**


Հայաստան, գուցէ այսպէս փոքրացար, Որ պտղուց հողոյ թալիսմանի պէս Այրուած մատեանի պատառիկ դարձար, Որ վրադ դողանք՝ բիր թոթերի մէջ: Որ պտղուց հողոյ թալիսմանի պէս Մեր կրծքի վրայ կրեմք երկիւղած, Անունդ տալով մաքրուէնք դարձալ՝ Աշխարհ ողողող ծով ստերի մէջ:

\*\*\*

Ունեցած հացդ Աշխարհի չափ է, Ունեցած հողդ խաչքարի չափ է. Իսկ տառապանքդ, Իսկ անգոր վարքդ, Ափէ-ափ գարկուող վիրատրանքդ Մովի, Ովկիանի, Աշխարհի չափ է...

\*\*\*

Սեղմիր ատամդ, դու ամէնքի մօտ Բացեքաց լալու իրաւունք չունես: Թելուզ վիրատր, թելուզ արնաքամ՝ Չէնքերդ տալու իրաւունք չունես, Դու՛ հայ բանաստեղծ, ինչ էլ որ լինի, Վերջին գինորն էլ ընկնի յուսահատ Քո ժողովրդի յաւերժութեանը Չհաւատալու իրաւունք չունես... Սրով եկան քեզ վրայ,



Դու գիրք ու գիր խնկեցիր, Կեանքդ, Կեանքդ փոխարէն Մազալաթոյ փրկեցիր. Մարդ ու աշխարհ քո առջեւ Ոսից-գլուխ մեղքի մէջ, Նարեկացու շուրթերով Դու թողութիւն խնդրեցիր...

\*\*\*

Դժուար է գալը, դժուար՝ գնալը, Դժուար՝ լուելը, դժուար՝ ճշալը, Դեռ հաւատալն է ամէնից դժուար, Աւելի դժուար՝ շհաւատալը...

# ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ԵՐՈՒԱՆԴ ԱԶԱՏԵԱՆԻ ՀԵՏ

(Շար. 9րդ էջէն)

Այն օրը որ սովետական բանակը իր ուշադրութիւնը անդին դարձնէ (եւ երբեմն կը դարձնէ՝ չեմ գիտեր ինչո՞ւ) մենք այդտեղ զօճ կրնանք երթալ: Մենք չենք կրնար հանդուրժել նախկին դրութիւնը:

Հոս չենք զգար մեր մորթին վրայ. բայց հոն Արցախցիներուն պէտք է հարցնել թէ ինչպիսի փորձանքներէ անցած են եւ կը շարունակեն անցնիլ. միշտ արթուն են եւ կը սպասեն որ Արցախ միանայ Հայաստանին: Կ'ուզեն անմարդկային ու միջնադարեան իշխանութեան մը լուծէն ազատուիլ եւ միանալ հարազատ հայրենիքին: Արցախի հայութիւնը խորհրդային Միութեան կազմէն դուրս գալու հարց մը չէ դրած՝ ինչպէս ըրած են Ատրպէյժանցի ազգայնամոլները. այլ մնալ միութեան կազմին մէջ եւ ոսկապէս կիրարկել ընկերավարութիւնը կամ անոր հիմք կազմող՝ ազգերու ինքնորոշման իրաւունքը...:

Ռատիօ «Այր».- Ինչպէ՞ս կը տեսնէք սփիւռքի նպաստը քաղաքական եւ տնտեսական մարզերու մէջ:

Ե.Ա.- Այսօր իրականութիւնը մեզի անակնկալի առջեւ դրաւ, ցոյց տալով որ Հայաստանը պատրաստ քաղաքական քայլեր չունի, որոնց վրայ մենք մեծ յոյսեր դրած էինք. եւ թէ պարագան նոյնն է դժբախտաբար արտասահմանի մէջ:

Ընդհանուր շարժում մը կայ տարրերային կերպով Հայաստանին օգտակար ըլլալու: Եթէ սփիւռքը չկարենայ շատ արագ կերպով այդ տարրերային շարժումը կազմակերպուած կենսուղիի մը կամ քաղաքական վճռաբարի մը վերածել այդ օժանդակութիւնը՝ դժբախտաբար մենք օգտակար պիտի չըլլանք հայրենիքին վճռական կերպով: Հիմա արտասահմանի մէջ, մեզի համար անմիջապէս անհրաժեշտութիւնը մեր միութիւնն է, մեր միակամութիւնը. ապա մեր զօրակցութիւնը Հայաստանի եւ Արցախի ժողովուրդին հետ:

Մեր նիւթական օժանդակութիւնը Հայաստանին նպատակ պիտի ունենայ զայն վերածել պիտանի եւ օգտակար հանրապետութեան մը: Որովհետեւ խորհրդային ընդհանուր համակարգին մէջ կործանած, խորտակուած 500 հազար գաղթականներով, կէս անօթի եւ մերկ Հայաստան մը ուղղակի բեռ մըն է ամբողջ խորհրդային Միութեան համար:

Սակայն եթէ մենք կարենանք արդիական ու ճարտարարուեստական հանրապետութեան մը վերածել ներկայ Հայաստանը, որ իր կարգին օգտակար ըլլայ, նպաստ մը բերելով խորհրդային Միութեան՝ այն ատեն մեր քաղաքական կշիռն ալ պիտի աւելնայ Հայաստանի մէջ, եւ դուրսէն ղէպի ներս հայութեան վարկն ու ուժին հանդէպ յարգանքը պիտի աւելնայ Կեդրոնական իշխանութեան մօտ...:

ՌԱՏԻՕ «ԱՅՐ».- Վերջերս Հայաստանի մէջ ծնունդ առած զանազան շարժումներու մասին՝ Գթութեան, Բարեսիրական. Անկախութեան, Հայկական Դատի, Ղարաբաղի Կոմիտէի, Համազգային Ծարժումի եւայլ, եւայլն, ի՞նչ է ձեր կարծիքը:

Ե.Ա.- Այդ երեւոյթը կը նմանի գաղթականութենէն կամ Եղեռնէն վերջ սփիւռքահայ կացութեան, ուր բազմաթիւ կազմակերպութիւններ հրապարակ իջած էին. իւրաքանչիւրը որոշ նպատակի մը համար: Անշուշտ այդ չըջանին աւելի բարեսիրական կազմակերպութիւնները զօրացան, անոնք ինքնակերտումի շարժումներ էին: Հայրենիքի ներկայ շարժումները աւելի քաղաքական բնոյթ ունին եւ

աւելի ուսմակարական դրութեան վերադարձող ժողովուրդի մը ազատ տնտեսութեան արտայայտութիւններն են, երբեմն հասկնալի ծայրայեղութիւններով:

Պէտք է ըսել որ Հայաստանի ժողովուրդը կազմակերպական ազատ կեանքի չէ վարժուած, այս շատ հեզակական բացատրութիւն մըն է բայց, ան շատ regimente կեանք մը ունեցած է սովետական իշխանութեան տակ: Ինք չէ որ կազմակերպած ինքզինքը, այլ ուրիշ մէկը ուզած է զինքը կազմակերպել այդ 70 տարիներուն ընթացքին: Հիմա որ ազատութիւն կը տրուի, հայ ժողովուրդը իր պահանջներուն եւ իր բջիջներուն մէջ կ'ուզէ ինքզինքը կազմակերպել:

Հայաստանը բազմաթիւ պահանջներ ունի՝ քաղաքական. ընկերային, ազգային, բարեսիրական եւ մշակութային: Ինչպէս որ խորհրդային իշխանութիւնը ազատութիւն կուտայ Հայաստանին իր տնտեսութիւնը կազմակերպելու՝ նոյնպէս բարոյական եւ ազգային գետնի վրայ ալ առիթ կը տրուի մեր ժողովուրդին որ ինքզինքը կազմակերպէ ոչ թէ Մոսկուայի կամ Երեւանի խորհրդային իշխանութիւններու պահանջով այլ ըստ իր կարիքներուն:

Պատմութիւնը ցոյց տուաւ որ խորհրդային իշխանութիւններու - Մոսկուայի թէ Երեւանի - պահանջները միշտ ալ հայ ժողովուրդի պահանջներուն չէին համընկնէր...:

ՌԱՏԻՕ «ԱՅՐ».- Այդ նոր շարժումներուն դեկավարները ընդհանրապէս գիտաշխատողներ են. լապտրաբուներու կամ մատենագիրներու մարդիկ են որոնք փառասիրութեամբ գուրկ քայց քաղաքական պատրաստութեամբ ալ գուրկ մարդիկ են. քայց ժողովուրդի վստահութիւնը կը վայելն՝ մամուլագիրները քանակաւ թեմէն յետոյ: Անոնք կրնա՞ն ըստ ձեզի վաղուց մեր առաջնորդները հանդիսանալ եւ մեր ճակատագիրը որոշել: Անոնք կրնան սխալներ գործել, որովհետեւ քաղաքականութիւնը անհաւաք է, անհարկ է ուր մուգագոյն սխալը ներքին չէ:

Ե.Ա.- Ղարաբաղի Կոմիտէի անդամները թէ Հայաստանի ամբողջ ժողովուրդը միայն ընտրովի տեղեկութիւններու հաղորդակից եղած են տասնամեակներու ընթացքին:

Տակաւին մինչեւ հիմա ալ անոնք քաղաքական ամբողջական ծանօթութիւններ չունին իր Միութեան շուրջ եւ աշխարհի անցուղարձերուն մասին: Իրական քաղաքականութիւն մը կը ճշդուի բոլոր տուեալներու գիտական վերլուծումին վրայ հիմնուած: Երբ մարդոց կը զլացուին այդ հնարաւորութիւնները, սխալներ գործելու հաւանականութիւնները կամ պատեհութիւնը կ'աւելնան:

Կը կարծեմ որ Ղարաբաղի Կոմիտէի կամ Համազգային Ծարժումի դեկավարները Հայաստանի խորունկ զգացումներէն բխող եւ զանոնք խորհրդանշող կազմակերպութիւններ են, բայց չեմ կրնար ըսել որ անոնք քաղաքական ամբողջական փորձառութիւն ունեցող մարդոցմէ կամ խմբաւորումներէ կազմուած են: Իրենց արտայայտութիւններէն կը տեսնենք երբեմն կեցուածքներ եւ երբեմն ալ քաղաքական հեռատեսութեան պակաս. անգիտակցութիւն մը՝ թէ պատմութեան վերաբերեալ եւ թէ մեր շրջապատի ազգութիւններու մասին որոնց միջեւ եղած յարաբերութիւնները շատ ազդած են մեր ճակատագրին վրայ: Իրենց արտայայտութիւններուն կամ որոշումներուն մէջ

մենք ակնատես կ'ըլլանք որոշ սահմանափակ ծանօթութիւններու:

Օրինակ վերջերս Հայաստանի խորհրդարանին մէջ կը լսենք երկու արտայայտութիւններ, մէկը Զօրի Բալայեանի ելոյթը որ կը ջատագովէ Ռուսիոյ ի նպաստ Հայաստանի քաղաքական արեւելումի շարունակումը, միւս՝ Պր. Լ. Տէր Պետրոսեանինը, որուն հանդէպ խոր յարգանք ունիմ, բայց ան յանկարծ փանթուրքի մը որպէս ոչ-մշտական սպառնալիք դիտելու վնասակար մտայնութիւն մը երեւան կը բերէ:

Ասիկա ահաւոր կարճատեսութիւն մըն է: Ինչպէ՞ս կարելի է ուրանալ փանթուրանիզմի վտանգը. Փանթուրանիզմը երէկ, այսօր եւ վաղը ահաւոր վտանգ կը ներկայացնէ մեզի, կերպով մը կը հակադրուի, Պր. Լ. Տէր Պետրոսեանի ելոյթին մէջ, Ղարաբաղի Կոմիտէի շարժման: Ուրեմն Արցախի ազատագրման հեռանկարը կարծէք թէ կարգելակուի, փանթուրքիզմի դէմ մեր ունեցած տրամադրութեամբ կամ զգօնութեամբ. ընդհակառակն, մէկը միւսին շարունակութիւնն է: Փանթուրքիզմը իր սուր դունչը Ատրպէյժանի միջոցաւ խրած է Հայաստանի կողմին, փանթուրանիզմը Ատրպէյժանով կը շարունակուի Հայաստանի կեանքին եւ հաշիւներու մէջ. կարելի չէ մէկը միւսէն անջատել:

Ես շատ կը զարմանամ որ այդպիսի արտայայտութիւններ կ'ըլլան եւ կերպով մըն ալ անուղղակի թուրքը իբրեւ իրենց դաշնակից ներկայացնելու խորունկ միամտութիւնը մէջտեղ կ'եւլէ:

Մենք տեսանք 1921-ի Փետրուարեան Ապստամբութեան առիթով ինչպէս հանդիսատեսի դիրք մը բռնեցին թուրքերը. հակառակ Դաշնակցութեան իրենց ըրած դիմումին, ձգեցին որ հայ ժողովուրդը խորհրդային իշխանութեան դէմ ունեցած բախումին ընթացքին քիչ մը եւս կոտորակուի, կարծէք թէ մէկուկէս միլիոն զօճ բաւարար եղած չըլլար:

Միւս կողմէ Զօրի Բալայեանի բացատրութեամբ «Մեծն» Ռուսաստանի հանդէպ ստորակայութեան տրամադրութիւնն ալ շատ չեմ բաժնէր: Մենք մէկ ընտրութիւն ունինք: Մեր փոքր ժողովուրդին շահերը եւ քաղաքական դրութիւնը այնպէս մը դասաւորուած են որ մեր կեանքը Ռուսաստանի քաղաքականութեան կապուած է:

Ձեռք կրնար անտեսել այդ իրողութիւնը, այնպէս ինչպէս Հայաստանի Հանրապետութեան օրերուն անտեսուեցաւ ան, երբ ըսին «Եթէ Մոսկուան մեզի պէտք ունի՝ մեր ոտքը թող գայ...»:

Մենք փոքր երկիր մըն ենք հիմա եւ շահերու համադրութիւն մը պէտք է ստեղծենք, ոչ այդ մեծամտութիւնը եւ ոչ ալ ստորակայութեան այդ զգացումը մեզ տեղ կը հասցնեն. չմտածել թէ ինչ որ Ռուսաստան կ'ըսէ անպատճառ ճիշտ է: Ան կը յայտարարէ իր շահերուն համապատասխան եղած բանը միայն: Բայց չեմ կարծեր որ այսօր կամ վաղը աշխարհի քաղաքական իրականութեան մէջ բան մը փոխուի: Ոչ ալ նախատեսելի ժամանակի մը մէջ փոփոխութիւն կրէ, հետեւաբար մենք պիտի հաշտուինք Ռուսաստանի հետ ապրելու իրողութեան հետ: Փանթուրքիզմը իբրեւ վտանգ տեսնենք կամ ոչ, մենք ուզենք կամ չուզենք թուրքը մնայուն նպատակ ունի մեզ բնաջնջելու. երբ կը տեսնէ որ Հայաստան մը գոյութիւն ունի՝ զայն անպատճառ պիտի ջնջէ քարտէսի վրայէն, այդպիսի աղէտի մը պարագային, հայերն ալ կը բնաջնջուին երկրին մակերեսէն:

ՌԱՏԻՕ «ԱՅՐ».- Հիմն է վեր մեր պատմութեան ընթացքին գոյութիւն

ունեցած է երկու արեւելում, Բիւզանդիոն կամ Տիւրքն եւայլն: Թուրքիան գոյութիւն չունէր տակաւին եւ ատիկա շարունակուած է ցայսօր, ես կ'ուզեմ սատանային փաստաբան ըլլալ: Այսօր իրապէս ամենա՞ր կը գտնէք Թրքական «Օրիանթալի» մը երբ ժամանակները փոխուած են. Թուրքիան կ'ուզէ Եւրոպական համայնք մտնել եւ ինքզինքը արդիականացնել, ժողովրդական եւ ուսմակարական երկիր մը դառնալ: Այդ ոլորին շրջագծիմ մէջ արդեօք կարելի չէ՞ հայկական հարցին լուծումը այնպէս մը կայացնել, երկխօսութիւն մը ստեղծել եւ Թուրքիան համոզել, ամիկա իրեն համար նպաստաւոր եւ շահաւոր է, Այդպէս շահաւոր եւ նպաստաւոր կ'ըլլայ հայութեան՝ առանց այդ պայմաններու մէջ հակադրուելու Ռուսներու եւ Ռուսական շահերուն:

Ե.Ա.- Եթէ թուրքիան նման որեւէ դիտաւորութիւն ունի կամ եթէ որեւէ մէկը կը տեսնէ որ թուրքիան այդպիսի վիճակի մէջ կրնայ ըլլալ՝ թող յայտարարէ: Բայց թուրքիոյ Եւրոպական համայնքէն ներս մտնելու գլխաւոր արգելքներէն մին մարդկային իրաւանց բռնաբարումն է: Այսօր 15 միլիոն Գիւրտեր կան թուրքիոյ մէջ, եւ եթէ այդպիսի տրամադրութիւն մը ունի, անոնք ամբողջութեամբ իր ափին մէջ են, թող մէջ մը այդ տրամադրութիւնը Գիւրտերու հանդէպ ցոյց տայ:

Ահաւոր ջարդեր, բռնաբարումներ, կախաղաններ կը շարունակուին ներքին զաւառներու մէջ, իսկ միւս կողմէ թուրքերը Եւրոպային կը ժպտին ըսելով որ «ահաւասիկ մենք քաղաքակիրթ երկիր ենք»:

Յետոյ քաղաքական իրականութիւն մըն ալ գոյութիւն ունի: Պատիկ կ'իրոս մը կար, ինչպէ՞ս յարձակեցան, յօշոտեցին զայն եւ երկրին 40%ը բռնի գրաւեցին...:

Եթէ իրօք այդպիսի դիտաւորութիւն մը ունին՝ մենք կ'ուզենք զայն տեսնել կ'իրոսի պարագային ալ: Կերպով մը մենք պէտք է ակնատես ըլլանք որ թուրքիան ներքին թէ արտաքին գետնի վրայ մաքրուած է իր հակամարդկային եւ հակաուսմակարական հոլոթենէ եւ պատրաստ է իր պատմութեան հետ հաշուեյարդարի նստելու եւ ըսելու որ «այդ մեր նախնիքները մէկուկէս միլիոն հայեր ջարդեցին, նստինք եւ հաշուակցինք», այնպէս ինչպէս որ ըրին գերմանացիները:

Մեր պատմական յուշարձաններուն հանդէպ թող մարդկային վերաբերում մը ցուցաբերեն. այն ատեն թերեւս կրնանք համոզուիլ որ թուրքիոյ մէջ բան մը փոխուած է:

Մեր յոյսը մեր դիմացը քաղաքակիրթ թուրքիա մը ունենալուն մէջ է, այնպէս ինչպէս հրեաները քաղաքակիրթ Գերմանիա մը ունեցան եւ կըրցան իբրեւ քաղաքակիրթ ազգ խօսակցիլ եւ պատմութեան հաշուեյարդարը կատարել եւ ստանալ առատ հատուցում:

Մեր յոյսն ալ այդ է որ օր մը թուրքը քաղաքակիրթութիւն եւ մենք կը մաղթենք որ քաղաքակիրթութիւն, ինչ որ ի վերջոյ մեզի ի նպաստ պիտի ըլլայ ինչպէս՝ ի շահ համայն մարդկութեան: Քաղաքակիրթ ազգ դարձած թուրքը պիտի ուզէր նստիլ եւ հաշուեյարդար կատարել իր պատմութեան հետ. այն ատեն պիտի տեսնէր թէ ինչպիսի արիւնալի պատկեր մը գոյութիւն ունի այդ պատմութեան մէջ, մանաւանդ հայ ժողովուրդի նկատմամբ:

Այդ պարագային թերեւս, միայն (որ շատ թէական է) կարելի ըլլայ նստիլ եւ խօսիլ...:

Քաղեց Բ. Ա.